ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն՝ ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

01 սեպտեմբերի 2023 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 (տասներեք) անդամներ:

Բացակա էին Արշալույս Վարդանյանը և Ավագ Սահակյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Նիստին ներկա էր համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, համայնքապետարանի աշխատակազմի իրավաբան Հովհաննես Լալայանը, ինչպես նաև Բյուրեղավան համայնքի ավագանու «Արդար Հայաստան» խմբակցության կողմից հրավիրված անձ Սարիկ Դավթյանը:

Հակոբ Բալասյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու «Արդար Հայաստան» կուսակցության ցուցակի կազմում տեղի է ունեցել փոփոխություն: Վաղաժամկետ դադարեցվել է համայնքի ավագանու անդամ Լիանա Գևորգյանի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն:

ՀՀ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 14-ի N 5 արձանագրության համաձայն՝ Լիանա Գևորգյանի մանդատը տրվել է «Արդար

Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Սոս Զավենի Չիլինգարյանին:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են տասներեքը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 01-ի թիվ 10 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

4.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

5.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

6.Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող 0.0058 հեկտար մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

7.Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող 0.02387 հեկտար մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

8.Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում գտնվող 0.03835 հեկտար մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի N 33-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

10.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 8 Դեմ - 5 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 50-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Օրակարգը հաստատելուց հետո համայնքի ավագանու անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Աշխեն Մարուքյանը (կապված շահերի բախմանը առնչվող օրակարգային հարցերից 2-ի հետ) Արմեն Սարգսյանը, Վալենտինա Կաղիյանն ու Սոս Չիլինգարյանը դուրս եկան նիստի սենյակից:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 90-Ն որոշման հավելվածի 1, 2, 3 և 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 51-Ն/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի ղեկավարի հաղորդումը 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 52-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 53-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 01-ի N 130 եզրակացությունը, Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման N Պ-701 պայմանագիրը, N Լ-701 լեռնահատկացման ակտը, Օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/701 թույլտվությունը և «ՊԵՄՋԱ ՕԲՍ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր գյուղի 07-055-0212-0090 ծածկագրով (վկայական N 04072023-07-0014) 21.96 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողեր) հողամասը ընդերքօգտագործման նպատակով, առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրել «ՊԵՄՋԱ ՕԲՍ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 19 (տասնինը) տարի ժամկետով, տարեկան 1739232 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ վարձավճարով:

2.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքի փոփոխման դեպքում վարձավճարը նույնպես ենթակա է փոփոխման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 54-Ա/

<u>Լսեցին</u>

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հարություն Նորիկի Բալասյանի 2023 թվականի ապրիլի 06-ի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հարություն Նորիկի Բալասյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 19012023-07-0143) Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում գտնվող 07-051-0218-0042 կադաստրային ծածկագրով 0.3311 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների (ոռոգման նպատակով 2500-3000 խորանարդ մետր ծավալով ջրավազան կառուցելու համար):

2.Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ դիմումի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու, համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասին ճարտարապետահատակագծային առաջադրանք և հասցե տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

3. Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները.

2) սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ներառել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 7 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 55-Ա/

Հակոբ Բալասյանը չի մասնակցել որոշման քվեարկությանը:

<u>Լսեցին</u>

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0058 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 39-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 2023 թվականի հուլիսի 10-ի N Կ-10072023-07-0075 որոշումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի տարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0058 հեկտար մակերեսով (ծածկագիր՝ 07-003-0055-0001-ից) «անհայտ» քաղաքացու անվամբ հաշվառված հողամասը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 56-Ա/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.02387 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 39-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 2023 թվականի հունիսի 22-ի N Կ-22062023-07-0169 որոշումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի տարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.02387 հեկտար մակերեսով (ծածկագիր՝ 07-051-0134-0020) «անհայտ» քաղաքացու անվամբ հաշվառված հողամասը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 57-Ա/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.03835 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 39-րդ կետի 1-ին ենթակետի, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի 2023 թվականի հունիսի 27-ի N Կ-27072023-07-0145 որոշումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի տարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.03835 հեկտար մակերեսով (ծածկագիր՝ 07-003-0013-ից) «անհայտ» քաղաքացու անվամբ հաշվառված հողամասը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 58-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13–Ի N 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին» N 33-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 71 (նախկին՝ Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին շարքի թիվ 36) հասցեում գտնվող 0.0095 հա (սեփականության վկայական N 1078104, տրված՝ 2006 թվականի մարտի 02-ին) բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ամբողջ կադաստրային արժեքով՝ 421980 (չորս հարյուր քսանմեկ հազար ինն հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել շինության սեփականատեր Արմիկ Աշոտի Ալեքսանյանին (անձնագիր՝ AU0531546, տրված՝ 2021 թվականի դեկտեմբերի 01-ին, 059-ի կողմից):»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 59-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 77 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 08052023-07-0180, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0053-0060), 80 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 08052023-07-0115, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0053-0057), 87 հասցեի 0.05 հեկտար մակերեսով (վկայական՝ N 08052023-07-0048, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0053-0050) բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 0

Որոշումն ընդունված է. /որոշում N 60-Ա/

Աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը հայտնեց, որ՝ ի պատասխան իր կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքների, Բյուրեղավան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանն ու Ավագ Սահակյանը ներկայացրել են ավագանու նիստերից իրենց բացակայության պատճառների մասին:

2023թ. օգոստոսի 23-ին ներկայացրած գրությամբ Վ. Վարդևանյանը հայտնել է, որ՝

27.02.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 3 նիստին բացակայել է գործնական ծանրաբեռնվածության բերումով,

12.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 6 և 16.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 7 նիստերին բացակայել է անձնական գործերի հետ անհամատեղելիության պատճառով,

10.08.2023թ.-ի համայնքի ավագանու արտահերթ թիվ 9 նիստին բացակայել է օրակարգային հարցերից մեկի, որը վերաբերում էր Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելուն, շահերի բախում համարելու պատճառով:

2023թ. օգոստոսի 23-ին ներկայացրած գրությամբ Արշալույս Վարդանյանը հայտնել է, որ՝

27.02.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 3 նիստին բացակայել է գործնական ծանրաբեռնվածության բերումով,

13.04.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստին բացակայել է, քանի որ նույն ժամանակահատվածում մասնակցել է առցանց դասընթացի,

12.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստին բացակայել է գործնական ծանրաբեռնվածության բերումով,

16.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 7 նիստին բացակայել է անձնական գործերի հետ անհամատեղելիության պատճառով,

16.06.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 8 նիստին բացակայել է, քանի որ նույն օրն ընթացել է ԲՈՒՀ-երի ընդունելության միասնական քննություն, որին նա մասնակցել է որպես ԳԹԿ ներկայացուցիչ,

10.08.2023թ.-ի համայնքի ավագանու արտահերթ թիվ 9 նիստին բացակայել է օրակարգային հարցերից մեկի, որը վերաբերում էր Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելուն, շահերի բախում համարելու պատճառով:

2023թ. օգոստոսի 24-ին ներկայացրած գրությամբ Աշխեն Մարուքյանը հայտնել է, որ՝

27.02.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 3 նիստին բացակայել է գործնական ծանրաբեռնվածության բերումով,
12.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստին բացակայել է ընտանեկան գործերի հետ անհամատեղելիության բերումով,
16.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 7 նիստին բացակայել է անձնական գործերի հետ անհամատեղելիության պատճառով,
16.06.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 8 նիստին բացակայել է գործնական ծանրաբեռնվածության բերումով,
10.08.2023թ.-ի համայնքի ավագանու արտահերթ թիվ 9 նիստին բացակայել է օրակարգային հարցերից մեկի, որը վերաբերում էր Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելուն, շահերի բախում համարելու պատճառով:

2023թ. օգոստոսի 24-ին և 25-ին ներկայացրած գրություններով Ավագ Սահակյանը հայտնել է, որ՝
26.01.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու արտահերթ թիվ 1, 13.03.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 4 և 16.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 7 նիստերին բացակայել է գործնական ծանրաբեռնվածության բերումով՝ լինելով բժիշկ-ատամնաբույժ:
12.05.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական թիվ 6 և 27.02.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի արտահերթ թիվ 3 նիստերին բացակայել է անձնական գործերի հետ անհամատեղելիության պատճառով,
10.08.2023թ.-ի համայնքի ավագանու արտահերթ թիվ 9 նիստին բացակայել է օրակարգային հարցերից մեկի, որը վերաբերում էր Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելուն, շահերի բախում համարելու պատճառով:

Լիլիթ Ավուշյանը հայտնեց, որ՝ ի պատասխան իր կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքի, Բյուրեղավան համայնքի ավագանու «Արդար Հայաստան» խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանը 2023թ. օգոստոսի 28-ին ներկայացրել է գրություն ավագանու նիստերից բացակայության պատճառների մասին՝ նշելով, որ բացակայությունները պայմանավորված են առողջական, հանրապետությունից բացակայելու, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի և համայնքի ղեկավարի կողմից ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով բավարար պայմաններ չստեղծելով:

Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց նաև, որ՝ ի պատասխան իր կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքի, Բյուրեղավան համայնքի ավագանու «Միասնություն» խմբակցության ղեկավար Էդիկ Պիճիկյանը 2023թ. օգոստոսի 31-ին ներկայացրել է գրություն ավագանու նիստերից բացակայության պատճառների մասին՝ նշելով, որ աշխատանքի բերումով չի կարողացել մասնակցել ավագանու 10.08.2023թ. արտահերթ թիվ 9 նիստին:

Բյուրեղավան համայնքի ավագանու «Միասնություն» խմբակցության անդամ Աննա Մկրտչյանը 2023թ. սեպտեմբերի 01-ին ներկայացրել է գրություն ավագանու նիստերից բացակայության պատճառների մասին՝ նշելով, որ սպորտային մրցումներին մասնակցելու պատճառով չի կարողացել մասնակցել ավագանու 13.04.2023թ. արտահերթ թիվ 5 և 12.05.2023թ. հերթական թիվ 6 նիստերին:

Բյուրեղավան համայնքի ավագանու «Միասնություն» խմբակցության անդամ Արմեն Հայրապետյանը 2023թ. սեպտեմբերի 01-ին ներկայացրել է գրություն ավագանու նիստերից բացակայության պատճառների մասին՝ նշելով, որ անձնական խնդիրների պատճառով չի կարողացել մասնակցել ավագանու 27.02.2023թ. արտահերթ թիվ 3, 13.04.2023թ. հերթական թիվ 5 և 12.05.2023թ. հերթական թիվ 6 նիստերին:

Լիլիթ Ավուշյանը հայտնեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արփինե Սուքիասյանը 2023 թվականի օգոստոսի 21-ին ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ 2-րդ նստաշրջանում նիստեր չեն հրավիրվել:

Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էդիկ Պիճիկյանը 2023 թվականի օգոստոսի 31-ին ներկայացրել է նիստերից ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք, որում հայտնել է, որ Էդիկ Պիճիկյանն ու Վարդան Սուքիասյանը 6 նիստերից բացակայություններ չեն ունեցել, Կարապետ Հարությունյանը բացակայել է մեկ նիստից (10.04.2023թ.), Վլադիմիր Վարդևանյանը՝ երեք նիստերից (13.03.2023թ., 11.05.2023թ. և 10.08.2023թ.), Ավագ Սահակյանը և Վալենտինա Կաղիյանը ոչ մի նիստի չեն մասնակցել:

Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էդիկ Պիճիկյանը 2023 թվականի օգոստոսի 31-ին ներկայացրել է նիստերից ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք, որում հայտնել է, որ Է.դիկ Պիճիկյանն 6 նիստերից բացակայություններ չի ունեցել, Արմեն Հայրապետյանը բացակայել է երկու նիստերից (10.04.2023թ. և 11.05.2023թ.), Աշխեն Մարուքյանը՝ մեկ նիստից (10.08.2023թ.), Արմեն Սարգսյանը ոչ մի նիստի չի մասնակցել:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱՂԻՅԱՆ _____

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ